ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն

(առարկա)

Թեմա՝ Ուսուցման ժամանակակից մեթոդներ

Կազմեց՝ ,,Կապանի N 13 հիմնական դպրոց,, ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ Արշալույս Մնացականյան

(անուն-ազգանուն)

(հիմնարկի անուն)

Ղեկավար՝ Լուսինե Սողոմոնյան

‘Կապանի N2 ավագ դպրոց‘ ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն----------3
2.Գրական ակնարկ----------5
3.Ուսուցման կոլեկտիվ եղանակի մեթոդիկաները----------6
4.<<Ռիվինի մեթոդիկայի >>տեսական և գործնական հարցերը--7
5.<<Հասկացման բերող քարտերի մեթոդիկայի>> տեսական և գործնական հարցերը----------10
6.Եզրակացություն----------14
7.Գրականության ցանկ----------16
8.Հավելված----------17

1.Ներածություն

«Տվեք երեխային հետաքրքրասիրություն,
Գիտելիքը նա կգտնի ինքը» Անատոլի Գին

Աշխատելով դպրոցում, հանդիպելով մի շարք դժվարությունների, առնչություն ունենալով երեխաների հետ, որոնք ուսումնասիրում են ժամանակակից հայոց լեզուն, ես եկա այն համոզման, որ քերականության և ընթերցանության ուսուցումը մեծ դժվարություն է առաջացնում երեխաների շրջանում: Ամեն մի նոր սերունդ, փոխարինելով հնին, սկսում է իր ինքնուրույն կյանքը ոչ դատարկ տեղում: Նա գտնում է առկա նյութական և հոգևոր արժեքների որոշակի մի գումար: Նոր սերունդը, յուրացնելով նախորդ փորձը, բազմապատկում է այն:

Որպես հասարակական ֆունկցիա՝ դաստիարակությունը չի մնում անփոփոխ: Հասարակության նյութական հիմքերի զարգացումից կախված, գաղափարախոսության զարգացման հետ միասին, փոփոխվում են նաև դաստիարակությունը, նրա նպատակները, բովանդակությունն ու մեթոդները:

Ուսուցումը ներկայացնում է այն հիմնական ձևը, որով կենսագործվում է կրթությունը: Ուսուցումը դպրոցում նպատակ ունի զինել սովորողներին գիտելիքներով,կարողություններով և հմտություններով: Մանկավարժությունը մի գիտություն է, որով լուծվում է դաստիարակության պրոցեսների կառավարման բարդ հարցերը,նա անպտուղ է՝ առանց մանկավարժական մեթոդիկայի և տեխնիկայի:

Ուսուցման մեթոդներ ասելով հասկանում ենք ուսուցչի և աշակերտների փոխադարձաբար կապված գործունեության եղանակները,որոնք ուղղված են ուսուցման խնդիրների լուծմանը: Մանկավարժական գրականության մեջ մեթոդ հասկացությունը վերագրում են երբեմն միայն գործունեությանը կամ միայն սովորողների գործունեությանը: Ինչպես գիտենք, արդի կրթական չափորոշիչները սահմանում են նոր կարողունակությունների համակարգ թե' սովորողների, թե' դասավանդողների համար: Նորագույն կրթական տեխնոլոգիաների ներդրումը դպրոցում իր հետ բերել է բազմաթիվ հրամայականներ, և կրթական ոլորտը ամենօրյա ռեժիմով արդիականացվում է, ընդ որում՝ ոչ միայն դասավանդողներն են զինվում համապատասխան նոր մեթոդամանկավարժական գիտելիքներով, այլև գնալով փոխվում է նաև սովորողի դերակատարումը: Բարեփոխումների ֆոնին՝ վերարժեվորվել են նաև բոլոր ուսումնական առարկաների դասավանդման նպատակներն ու վերջնարդյունքները: Անհերքելի փաստ է, որ լեզուների ուսումնասիրությունն ընդլայնում է սովորողի աշխարհայացքը, նպաստում հաղորդակցման և հանրամշակույթային կարողությունների ձևավորմանը, լեզվական

նորմերի ընկալմանը: Հանրակրթական դպրոցում հայոց լեզվի դասավանդումը ինչպես աջակցում է սովորողների ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը, այնպես էլ վերջիններիս մոտ ձևավորում նոր հմտություններ ու կարողություններ՝ հիմք հանդիսանալով մյուս ուսումնական առարկաների ուսումնասիրության համար: Ակնհայտ է, որ հայոց լեզվի առարկայական չափորոշչով սահմանված վերջնարդյունքին հասնելու գործընթացը պահանջում է երկարատև ու համակարգված աշխատանք, որտեղ կարևոր են և' սովորողի նախաձեռնողականությունն ու մոտիվացիան, և' ուսուցչի մասնագիտական որակները: Հայոց լեզվի դասավանդման շրջանակներում հույժ կարևոր է թե' գրավոր, թե' բանավոր խոսքը, որոնք փոխլրացնում են միմյանց: Վերը նշած համագործակցության կայացման և ցանկալի վերջնարդյունքի հաստատմանը մեծապես կարող է օգնել կրթական համակարգի արդիականացումը: Ավանդական մոդելով պլանավորված դասն այլևս չի կարողանում բավարարել նոր մտածողություն ու կրթական կարիքներ ունեցող սովորողների կրթական պահանջմունքները, ուստի հարկավոր է մեծապես վերանայել դասի պլանավորման գործընթացը: Մեր մանկավարժական գործունեության փորձին հղում անելով՝ կարող ենք փաստել, որ ինտերակտիվ տեխնոլոգիաների ներդրումը , ՏՀՏ բաղադրիչի կիրառումը դասի ժամանակ ավելի արդյունավետ ու արգասաբեր կարող են դարձնել բուն ուսուցման գործընթացը: Այսպիսով, կարող ենք փաստել, որ նորարարություններով պայմանավորված կրթական բարենպաստ միջավայրի ապահովումը սովորողի համար ստեղծում է անհրաժեշտ ազդակներ, որպեսզի դասապրոցեսը դիտարկվի ոչ թե հարկադրանք, այլ սեփական հետաքրքրությունները, գաղափարներն ու ներուժը համակարգելու ու տեսանելի արդյունք ստանալու հարթակ:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել ուսուցչի կողմից ճիշտ ընտրված մեթոդը:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել <<Ուսուցման կոլեկտիվ եղանակների>> մեթոդիկայով դասապրոցես կազմակերպելու դերը սովորողների գիտելիքների ձեռքբերման ու ամրակայման, համագործակցային, նախաձեռնողական, ստեղծագործական և այլ կարողությունների զարգացման գործում, ինչպես նաև ցույց տալ հայոց լեզվի դասավանդման շրջանակներում ուսուցչի դերը վերը թվարկած կարողությունները ձևավորելու հարցում:

Հետազոտություն խնդիրը: Հետազոտության խնդիրն է սահմանել հայոց լեզվի դասի շրջանակներում ուսուցման կազմակերպման արդյունավետության բարձրացման եղանակներ:

Այս բոլորի ուսումնասիրման, ներկայացման համար ես առաջարկում եմ դժվարությունների հաղթահարման հետևյալ տեխնոլոգիաները, որոնք կներկայացնեմ սույն աշխատանքում: Իհարկե, ես տիրապետում եմ <<Ուսուցման կոլեկտիվ եղանակների>> բոլոր մեթոդիկաներին, բայց ժամանակի սղության պատճառով հետազոտության ընթացքում անդրադարձել եմ միայն Ռիվինի և Հասկացման բերող քարտերի մեթոդիկաներին:

2.Գրական ակնարկ

Ուսուցման և դաստիարակության կազմակերպման գործընթացներում մեթոդի, տեխնոլոգիայի և մեթոդիկայի հարցերն ունեն որոշիչ նշանակություն:

Մանկավարժ Վիկտոր Շատալովը վճռական և հետևողական պայքարով դուրս եկավ ուսումնական գործընթացի ավանդական կազմակերպման դոգմատիկ շրջանակից , և կիրառելով մի շարք մանկավարժական մեթոդիկաներ, կարողացավ հասնել ուսումնական գործընթացի մեծ և չտեսնված արդյունավետություն: Մշակվել են հատուկ մեթոդիկաներ, որոնք երեխաներին հնարավորություն են տալիս լիարժեք յուրացնելու ուսումնական ծրագիրը: Այդ մեթոդիկաներն ունեն մի շարք առանձնահատկություններ:

- Սկզբում ուսումնական ծրագիրը յուրացվում է առաջին մակարդակով: Հետո ուսումնասիիրվում է երկրորդ մակարդակով:Եվ, վերջապես, բազմակի կրկնությունների միջոցով յուրացման մակարդակը հասցվում է կատարելության:
- Հսկողությունն իրականացվում է յուրաքանչյուր երեխայի նկատմամբ , ընդ որում, վերահսկվում է ամեն մի թեմայի յուրացումը:
- Կազմակերպվում է աշակերտների համագործակցությունը փոխստուգման և խորհրդատվության նպատակով:
- Բարձր դասարանցիները ներգրավվում են ցածր դասարանցիների գործունեության հսկողության գործընթացի մեջ:
- Գնահատման բաց համակարգ (աշակերտը հնարավորության ունի վերադառնալու անցած թեմաներին , վերահանձնելու և բարձրացնելու իր գնահատականը) :

3. Ուսուցման կոլեկտիվ եղանակի մեթոդիկաները

1.Տեքստը պարբերություններով ուսումնասիրելու մեթոդիկա /Ռիվինի մեթոդիկա/

2.Թեմաների փոխհաղորդման մեթոդիկա

3.Առաջադրանքների փոխանակման մեթոդիկա

4.Անհատական հանձնարարությունների փոխհաղորդման մեթոդիկա

5.Հասկացման բերող քարտերի մեթոդիկա

6.Փոխվարժանքի մեթոդիկա

7.Տեքստերի ստեղծման մեթոդիկա/Ռիվինի հակադարձ մեթոդիկա/

4. <<Ռիվինի մեթոդիկայի >> տեսական և գործնական հարցերը

Տեքստը պարբերություններով ուսումնասիրելու մեթոդիկա /Ռիվինի մեթոդիկա /

Ռիվինի կողմից ստեղծված՝ սովորողների զույգերով աշխատաձևի կազմակերպման բազմաթիվ հնարքներից հատուկ ուշադրության է արժանի ըստ պարբերությունների տեքստերի ուսումնասիրության մեթոդիկան, որը կրճատ անվանում են Ռիվինի մեթոդիկա: Այս մեթոդիկան նախատեսված է գիտական, ուսումնական և գեղարվեստական բարդ տեքստերի ուսումնասիրման համար՝ սովորողների փոփոխական կազմով զույգային աշխատաձևի հիման վրա:

Համահավաք խմբի աշխատանքի կազմակերպումը

Ռիվինի մեթոդիկան ենթադրում է պարապմունքերի կազմակերպում հետևյալ ձևով: Յուրաքանչյուր սովորող ստանում է որևէ թեմա և մշակում է այն ըստ պարբերությունների / մաս առ մաս / փոփոխական կազմով զույգերում հետևյալ ձևով:

Առաջին պարբերության մշակման համար սովորողը զուգընկեր է գտնում,որի հետ կարդում է , քննարկում, պարզաբանում է բովանդակությունը և վերնագրում է պարբերությունը:Առաջին պարբերության վերնագիրը գրանցում է տետրում: Նույն ձևով նա օգնում է ընկերոջը հասկանալ իր պարբերությունը , վերնագրել և վերնագիրը գրանցել տետրում:

Դրանից հետո, իր երկրորդ պարբերության մշակման համար, սովորողը փնտրում է նոր զուգընկեր, պատմում է նրան առաջին պարբերության բովանդակությունը, այնուհետև նրա հետ կարդում , քննարկում, պարզաբանում է երկրորդ պարբերության բովանդակությունը, վերնագրում է և վերնագիրը գրում տետրում:Նույն ձևով նա օգնում է իր զուգընկերոջը՝ լսում է նրան,օգնում հասկանալ իր պարբերությունը, վերնագրել այն և վերնագիրը գրանցել տետրում:

Տեքստի երրորդ պարբերության մշակման համար սովորողը փնտրում է նոր զուգընկեր,պատմում նրան առաջին երկու պարբերությունների բովանդակությունը, հետո նրա հետ կարդում,քննարկում , պարզաբանում է երրորդ պարբերության բովանդակությունը,վերնագրում է և վերնագիրը գրում տետրում: Այնուհետև նա լսում է զուգընկերոջը, օգնում նրան հասկանալ իր պարբերությունը, վերնագրել և վերնագիրը գրել տետրում:

Եվ այսպես՝ շարունակ:

Ամբողջ տեքստը մշակելուց հետո, ստացած գիտելիքների ամրապնդմանը և համակարգման համար, սովորողը այդ թեմայով ելույթ է ունենում փոքր խմբի առջև կամ քննարկում է տվյալ թեման փոքր խմբում : Այնուհետև ատանում է նոր թեմա և մշակում այն նույն կերպ:

Ռիվինի մեթոդիկան՝ ընթերցողական կարողությունների զարգացման միջոց

Կարդալու կարողությունների զարգացումը մայրենի լեզվի դասի հիմնական նպատակն է: Մարդու մտավոր զարգացման մակարդակը որոշվում է նաև ձեռք բերած տեղեկույթը իմաստավորելու կարողությամբ: Ուսուցչի խնդիրն է ամենայն ուշադրությամբ հետևել, թե ինչպես է աշակերտը ընկալում,մշակում, իմաստավորում, պահպանում,հաղորդում և օգտագործում տեղեկույթը:

Ավանդական մեթոդներով դասընթացն իրականացնելիս աշխատել եմ բազմաթիվ աշակերտների հետ, որոնք ունեն կարդալու կարողության տարբեր մակարդակներ: Ակնհայտ է, որ նման դեպքում դասի ընթացքը դառնում է ձանձրալի այն աշակերտների համար, ովքեր ավելի արագ են յուրացնում ուսումնական նյութը: Իսկ Ռիվինի մեթոդիկայով աշխատանքի կազմակերպման ընթացքում, աշակերտները, աշխատելով փոփոխական կազմով զույգերով՝ միևնույն աշակերտը մի դեպքում իր կարողություններով գերազանցել է ընկերոջը, մեկ այլ դեպքում ՝ հետ է մնացել նրանից: Երկու դեպքում էլ փոխազդեցության բնույթն այնպիսին է , որ նրանում ներգրավված աշակերտը չի մնացել պասիվ հայեցողության վիճակում,այլ դարձել է ուսումնական գործընթացի ակտիվ մասնակից:

Ռիվինի մեթոդով բնագրերի ուսումնասիրություն կատարելու համար ընտրել եմ 6-րդ դասարանի աշակերտներին / <<Մայրենի 6>> դասագիրք/ և կատարել հետազոտություն /արդյունքները տե՛ս դիագրամով/: Արդյունքում աշակերտները ձեռք են բերել հարցաշար կազմելու կարողություն, իսկ դա գլխավորը երկրորդականից տարբերելու, բնագրի փոքրիկ պարբերությունների բովանդակությունն ամփոփ ներկայացնելու կարողության մասին է խոսում: Ինչպես ցույց տվեց իմ աշխատանքային փորձը՝ ուսումնական գործունեության այսօրինակ կազմակերպումն աշակերտների համար ստեղծում է հաճելի ու տրամադրող մթնոլորտ: Նրանք սովորում են ազատ մտքեր փոխանակել,բանավիճել,օգնել միմյանց, շշուկով խոսել, այս ամենով հանդերձ՝ նաև յուրացնել տեղեկույթի մշակման, պահպանման և հաղորդման գաղտնիքները: Սովորողների մեջ ձևավորվում է բարոյական պատասխանատվություն կոլեկտիվի հանդեպ: / Ստորև ներկայացված է Ռիվինի մեթոդիկայով աշխատանքի կազմակերպման աղյուսակը , իսկ դասի պլանը տե'ս հավելվածում/:

Հաշվառման աղյուսակ

Աշակերտի ազգանունը և անունը	Թեմաները					
	Թ1	Թ2	Թ3	Թ4	Թ5	Թ6
Աշակերտ 1	•				+	
Աշակերտ 2		+	•			
Աշակերտ 3	+			•		
Աշակերտ 4			+		•	
Աշակերտ 5		•				+
Աշակերտ 6						•

• ուսումնասիրվող թեմա

Թ-դասի թեմա

+Ուսումնասիրված , յուրացրած թեմա

Կիրառելով Ռիվինի մեթոդիկան՝ գրանցվել է որակական հետևյալ աճը



5.<<Հասկացման բերող քարտերի մեթոդիկայի>> տեսական և գործնական հարցերը

Ուսումնական պարապմունքներ իրականացնելիս հաճախ օգտագործվում են տարբեր տեսակի և նշանակության քարտեր:Օրինակ՝ հարցաթերթիկներ, որոնց միջոցով ստուգվում է աշակերտների կողմից յուրացվող թեմայի մակարդակը,կամ հարցաթերթիկներ՝ աշակերտներին գործողությունների ալգորիթմը հուշելու համար, առաջադրանքներով քարտեր՝ նյութն ամրապնդելու և կրկնելու համար: Այդպիսի քարտերը կոչվում են հասկացման բերող քարտեր, որոնց առանձնահատկությունն այն է, որ օգտագործվում են ոչ թե աշակերտների կողմից թեմայի յուրացման մակարդակը ստուգելու համար, այլ այդ թեմայի ամրապնդումն ապահովելու համար:

Հասկացման բերող քարտերը բաղկացած են այնպիսի հարցերից ու առաջադրանքներից, որոնք աշակերտին հանգեցնում են թեմայի ըմբռնմանը: Պատասխանելով հարցերին և կատարելով առաջադրանքները՝ աշակերտը ճիշտ է ընկալում իր թեման: Այլ խոսքով՝ հասկացման բերող քարտերի միջոցով կազմակերպվում է հասկացման գործընթացը և ասես կառավարվում է աշակերտի մտածողությունը: Հարցերն ու առաջադրանքները պետք է լինեն այնպիսին, որ աշակերտը կարողանա դրանք կատարելու ոչ թե թեման ըմբռնելուց հետո, այլ հակառակը՝ առաջադրանքների կատարման գործընթացը և պատասխանները պիտի հանգեցնեն թեմայի ըմբռնմանը:

Հասկացման բերող քարտերը կազմվում են մի քանի խումբ հարցերից ու առաջադրանքներից:

Առաջին խմբում ձևակերպվում են հարցեր, որոնք մի կողմից նպատակաուղղված են անցած նյութը ստուգելուն, որն անհրաժեշտ է նորը հասկանալու համար,մյուս կողմից ՝ այդ խմբի հարցերն ու առաջադրանքները աշակերտի ուշադրությունը կենտրոնացնում են նոր նյութի վրա:

Հաջորդ խմբի հարցերն ու առաջադրանքները աշակերտի ուշադրությունը հրավիրում են տարբեր բառերի և բառակապակցությունների վրա:

Երրորդ խմբի հարցերը վերաբերում են ուսումնասիրվող նյութի իմաստին: Հենց այս խմբի հարցերն ու առաջադրանքներն են ապահովում ըմբռնումը:

Այնուհետև կարող են հաջորդել հարցեր և առաջադրանքներ, որոնք ուղղված են հասկացված նյութն ամրապնդելուն և խորացնելուն: Հատուկ նշանակություն ունի հարցերի ու առաջադրանքների ներքին կապը:

Ձևաբանական գիտելիքների ուսուցումը ուսումնական նյութի ըմբռնմանը հանգեցնող քարտերի միջոցով

Ծրագրային նյութի գիտակցման ըմբռնամը հանգեցնող քարտերի կիրառումը ուսուցման կոլեկտիվ եղանակի տեսության մեջ <<Հասկացման բերող քարտերի մեթոդիկա>> անվանվամբ համարվում է հիմնական մեթոդիկաներից մեկը,որը քարտային աշխատանքի ճանապարհով , որոշակի հարցերի և առաջադրանքների միջոցով ապահովում է ուսումնական նյութի յուրացումը: Ես փորձել եմ ուսումնասիրվող գիտելիքի հասկացմանը բերող քարտերը կիրառել միջին դասարաններում՝ ձևաբանական գիտելիքների ուսուցման ժամանակ:

Պրակտիկ մանակավարժական աշխատանքը ինձ բերել է այն համոզման , որ մայրենի լեզվի ուսուցման գործընթացում ամենից դժվարը սովորողների մեջ լեզվական նոր հասկացությունների ձևավորման փուլն է: Այդ առումով միջին դասարաններում լեզվական ցանկացած երևույթի ճանաչման ու տարբերակման ուղղությամբ երեխաների ծավալած ուսումնական գործունեությունն առավել ակտիվ է դարձնում է քերականական հարցը , որը կարևոր նշանակություն ունի բառերի միջև եղած կապերն ու հարաբերությունները պարզելու համար:

Ուսուցման գործընթացը դժվար է պատկերացնել առանց ճիշտ և տեղին ձևակերպված հարցերի ու հարցադրումների, որոնք օգտագործվում են տարբեր նպատակներով .

- պարզելու սովորողների գիտելիքների ընդհանուր մակարդակը,ապահովելու մտքերի ու գաղափարների ընկալումը,
- խթանելու նրանց ակտիվությունն ու ներգրավվածությունը ուսուցման գործընթացում,
- զարգացնելու սովորողների՝ ինքնուրույն և խմբային գործունեություն իրականացնելու կարողությունները,
- զարգացնելու աշակերտների համեմատելու,հակադրելու,ընդհանրացնելու ,եզրակացություններ կատարելու կարողությունները և այլն:

Փաստորեն, հասկացման բերող քարտն ունի բացառապես ուսուցողական նպատակ:

Հաշվի առնելով, որ միջին դպրոցում լեզվական գիտելիքներն ուսուցանվում են գործնական ճանապարհով՝ առանց սահմանումների պարտադիր կիրառման՝ ուսումնական նյութի հասկացմանը նպաստող քարտն ունի փոքր - ինչ այլ կառուցվածք . քարտի սկզբում կանոնի կամ սահմանման փոխարեն կարող է տրվել

տեքստ կամ տեքստի որևէ հատված՝ յուրացման ենթակա լեզվական իրողության առանձնացմամբ:

Ուսումնական գործընթացում ուսումնական նյութի հասկացմանը նպաստող քարտերի կրառումը ենթադրում է ուսուցչի կողմից մի շարք կարևոր խնդիրների լուծում.

Ուսումնական նյութի քարտերի պատրաստում / օրինակ,կարող են ստեղծել տարբեր խոսքի մասերի առանձնահատկությունների ուսումնասիրության համար նախատեսված քարտեր՝ << Ածականի տեսակները>>, << Թվական անուն>>, <<Գոյականի թիվը>> և այլն/ , աշակերտների՝ այդ քարտերով աշխատելու գործընթացի կազմակերպում և վերահսկում , հաշվառման աղյուսակի ստեղծում: Բնականաբար, միայն մեթոդապես ճիշտ կազմված քարտերի միջոցով է պայմանավորված և՛ աշակերտների ինքնուրույն ու զույգային աշխատանքի հաջող կազմակերպումը , և՛ ուսումնասիրվող նյութի յուրացման մակարդակը:

Ներկայացնեմ ուսումնական նյութի հասկացմանը նպաստող քարտերով աշխատանքի կազմակերպման քայլերը.

1. Յուրաքանչյուր աշակերտ ստանում է հասկացման բերող մեկ քարտ: Ընդ որում՝ աշակերտներին կարող են տրվել ըստ թեմայի տարբեր քարտեր կամ մի քանի աշակերտ կարող են ստանալ նույն քարտը:
2. Ամեն մի աշակերտ ինքնուրույն ուսումնասիրում է իր ստացած քարտը, կարդում է քարտի սկզբում տրված կանոնը կամ այն միտքը, որն իքնը պետք է յուրացնի ,ապա հերթով կարդում է տրված հարցերը կամ առաջադրանքները և տետրում գրավոր պատասխանում դրանց:
3. Քարտի բոլոր հարցերին պատասխանելուց և բոլոր առաջադրանքները կատարելուց հետո աշակերտը մոտենում է ուսուցչին, որը ստուգում է աշխատանքի կատարումը:
4. Իրենց քարտերի շուրջ աշխատանքն ավարտած աշակերտները զույգեր են կազմում և օգնում իրար՝ յուրացնելու միմյանց քարտերը: Երբ նոր քարտ ուսումնասիրելիս աշակերտն աշխատում է այդ նյութն արդեն յուրացրած դասընկերոջ հետ, վերջինս կատարում է ստուգողի դեր: Այնուհետև երկրորդ աշակերտը նույն ձևով ուսումնասիրում է զույգի քարտը, իսկ այս անգամ առաջին աշակերտն է կատարում ստուգողի դերը:
5. Աշխատանքն ավարտելուց հետո զուգընկերները բաժանվում են. նրանցից ամեն մեկն սկսում է աշխատել մեկ այլ՝ նոր աշակերտի հետ՝ մեկ այլ քարտ ուսումնասիրելու նպատակով: Աշխատանքն այսպես շարունակվում է այնքան ,

մինչև աշակերտներից յուրաքանչյուրը յուրացնում է բոլոր քարտերի ուսումնական նյութը:

Ուսումնական նյութի հասկացմանը նպաստող քարտերով աշխատելու ողջ գործընթացը վերահսկելու համար անհրաժեշտ է ունենալ հաշվառման աղյուսակ , որտեղ նոր քարտ ուսումնասիրող աշակերտի անվան դիմաց նշվում է * նշանը , իսկ երբ նա ավարտում է աշխատանքն այդ քարտի շուրջը, նշվում է + նշանը: Այսպես պարզ է դառնում, թե որ աշակերտը քանի քարտ է յուրացրել: (Հաշվառման աղյուսակը տես նախորդ մեթոդիկայում):

Այսպիսով, ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման ժամանակ ուսումնական նյութի հասկացմանը նպաստող քարտերով աշխատելիս իրականացվում է և՛ ինքնուրույն , և՛ զույգային , և՛ խմբային աշխատանք: Այդպիսի քարտերով աշխատելիս աշակերտները հանդես են գալիս մեկ սովորողի, մեկ ստուգողի, մեկ սովորեցնողի դերում: Բացի այդ, ուսումնական նյութի հասկացմանը նպաստող քարտերի միջոցով ապահովվում է տարամակարդակ ուսուցում. Յուրաքանչյուր աշակերտ ստանում է իր մտավոր հնարավորությանը, գիտելիքների մակարդակին և մտածողության բնույթին համապատասխան քարտ և իրականացնում է իրեն հետաքրքրող, հետևաբար՝ հաղթահարելի աշխատանք:

<<Հասկացման բերող քարտերի>> մեթոդիկայով ձևաբանական գիտելիքների ձեռք բերման համար ընտրել եմ 5-րդ դասարանի աշակերտներին / <<Մայրենի 5>> դասագիրք/ և կատարել եմ հետազոտություն, որի արդյունքները հետևյալն են՝ ըստ դիագրամի:

Կիրառելով Հասկացման բերող քարտերի մեթոդիկան՝ գրանցվել է որակական հետևյալ աճը.



Եզրակացություն

Հին , ավանդական մեթոդնե՞ր, թե՞ նորագույն, ժամանակակից…
Կարծում եմ ՝ ամեն ինչում էլ ավելի գերադասելի է շարժվող և զարգացող տեսակետը: Հին ու նորի, լավ ու վատ կողմեր չկան, պարզապես պետք է ընդունենք այն, ինչն ավելի պարզ է և ավելի մատչելի կարող է լինել աշակերտների համար. չէ՞ որ սերնդի պահանջմունքներն էլ են փոխվում տարեցտարի: Ի վերջո, թե որն է ուսուցման ամենից արդյունավետ մեթոդը, պատասխանը միայն մեկն է՝ <<Այն, որ տանում է դրված նպատակին հասնելուն>> :

Ես իմ մանկավարժական գործունեությունն սկսել եմ Կոլեկտիվ ուսուցման եղանակի մեթոդիկաներով, այդ իսկ պատճառով ինձ համար ավանդական ՝ դաս-դասարանային համակարգից կոլեկտիվ ուսուցման եղանակին անցման խնդիր չի եղել/ չնայած այն հանգամանքին, որ ես ինքս դպրոցս, համալսարանն ավարտել եմ ավանդական մեթոդների ուսումնասիրությամբ/:

Եղեգի միջնակարգ դպրոցում / թերհամալրված գյուղական համայնք/ անցկացված սեմինար-պարապմունքների, մեթոդիկաների յուրացմամբ մենք ծանոթացանք միայն մեթոդիկաների տեսական մասին: Մեթոդիկաները գործնականում կիրառելիս բախվել ենք մի շարք դժվարությունների / ըստ թեմայի բովանդակության և ծավալի ՝ մեթոդիկայի ընտրության և կիրառման խնդիր, մեթոդիկայի քայլերի հաջորդականության պահպանության խնդիր, թեմայի դյուրին ուսուցման համար համապատասխան քարտի կազմման խնդիր, զույգային աշխատանքի ճիշտ կազմակերպում թե՛աշակերտների, թե՛ մանկավարժներիս կողմից , դասարանային աղմուկը և այլն /:

Մեթոդիկայի փորձնական շրջանում մենք դպրոցի մանկավարժներով մեթոդիկայի յուրաքանչյուր քայլ կիրառելիս անպայման քննարկում էինք միմյանց հետ, կատարում փոխադարձ դասալսումներ, մշտապես գտնում մեթոդիկայի կիրառման հաջողված կողմերը և անմիջապես կիրառում հաջորդ դասապրոցեսին:

Ի սկզբանե , ինձ դուր են եկել մեթոդիկաները, քանի որ դրանց կիրառմամբ յուրաքանչյուր սովորող դառնում է ուսումնական պարապմունքի գործուն մասնակիցը, նրանց հնարավորություն է տրվում ազատ արտահայտելու իրենց մտքերն ու կարծիքները և դրսևորել ինքնուրույնություն:

Ես , այժմ աշխատելով Կապանի թիվ 13 հիմնական դպրոցում, հայոց լեզվի և գրականության դասապրոցեսներին փորձնական կիրառում եմ Կոլեկտիվ ուսուցման եղանակի մեթոդիկաները, բայց ոչ ամբողջ քայլաշարով ու հերթագայությամբ, այլ ընդամենը մեթոդիկաների տարրեր, բայց առավել հաջողվում է <<Ռիվինի >>, <<Հասկացման բերող քարտերի>> և

<<Առաջադրանքների փոխանակման>> մեթոդիկաների կիրառումը / Կից ներկայացված են հաջողված դասի պլաններն ու համապատասխան քարտերը/: Այդ ընթացքում գրանցվել են մի շարք հաջողություններ և դժվարություններ:

Հաջողություններ

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ժամանակ բոլոր երեխաներն էլ սովորում են , բայց տարբեր տեմպերով՝ և դա բնական է , քանի որ այս պարապմունքների ժամանակ հաջողության ուղենիշը ոչ թե գնահատականն է, այլ ուսումնական նյութի որակյալ յուրացումը: Սովորողները ուղղորդվում են միայն դրական օրինակներով:Ուսուցիչը երկուսներով չի պատժում ծրագրից ետ մնացած սովորողներին:

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ներդրման շնորհիվ՝

- Ձևավորվում է ուսուցչի և աշակերտի համագործակցության և փոխօգնության միջավայր:
- Սովորողների մոտ դրական վերաբերմունք է ձևավորվում ուսուցման նկատմամբ:
- Բարձրանում է սովորողների պատասխանատվության և ուսման առաջադիմության մակարդակը:
- Բարելավվում է առանձին առարկաների ոլորտում ձեռք բերված գիտելիքների ,կարողությունների և հմտությունների որակն ու ուսումնական առաջադիմությունը:

Դժվարություններ

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքների կիրառման ժամանակ՝

- Հնարավոր չի լինում առաջնորդվել ուսումնական ծրագրով:
- Դասապրոցեսը չի կարող սահմանափակվել 45 րոպեով:
- Աշխատանքի ճիշտ վերահսկումը. անհրաժեշտություն է առաջանում դասապրոցեսի կազմակերպիչների /դասախոս, դասհարցում կատարող ուսուցիչ, թեման հանձնելու ստուգիչ-ընդունիչ ուսուցիչ, կոլեկտիվ խմբերի վերահսկող և այլն/:
- Բոլոր առարկաներից և դասանյութերից առկա չեն անհրաժեշտ ուսումնական նյութերը/ քարտեր, աղյուսակներ, հաշվառման թերթիկներ և այլն/:
- Ինչ խոսք, մեթոդիկաների քարտեր կազմելը շատ աշխատատար է: Ամեն մի մտահաղացման համար հարկավոր է երկար պատրաստվել, սակայն կարծում եմ՝ դա ժամանակի խնդիր է և տարեցտարի իմ մշակած նյութերի, քարտերի շնորհիվ ավելի հեշտ կլինի հետագա գործընթացի կազմակերպումը:

- Դասարանում տիրող խառնաշփոթային իրավիճակ, աղմուկ զույգերում կամ խմբերում, քանի որ մեթոդիկաների քայլաշարերին էլ դեռևս չեն տիրապետում աշակերտները:

Ի վերջո, ուսումնասիրելով և կիրառելով Ուսուցման կոլեկտիվ եղանակների մեթոդիկաները, եկա այն եզրահանգման, որ այս մեթոդիկաների շնորհիվ զարգանում է աշակերտների ինքնուրույնությունը, կարողունակություններն էլ ավելի են զարգանում, քան ավանդական՝ դաս-դասարանային համակարգով ուսուցում կազմակերպելու ընթացքում:

Գրականության ցանկ

1. Կ.Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատություններից բերված բոլոր քաղվածքները տրվում են երկերի ռուսերեն երկրորդ հրատրակությունից:
2. Վիկտոր Շատալով <<Ուր և ինչպես անհետացան երեքները>>:
3. Մանուկ Մկրտչյան <<Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական,տեսական և գործնական հարցերը>>, Երևան 2011:
4. <<Մանկավարժություն>> ամսագիր 1, 2014թ. , էջ 37 :
5. <<Մանկավարժություն>> ամսագիր 4, 2014թ.,էջ 48:
6. <<Մանկավարժություն>> ամսագիր 1, 2013թ., էջ 37:
7. Ա.Ա. Բալյան , <<Մանկավարժական վարպետության հիմունքներ>>, Երևան 1988թ.,էջ 6 :

Հավելված / քարտեր/

Օ-ո-ի ուղղագրությունը և ուղղախոսությունը

Կանոն՝

1 / Բառասկզբի օ հնչյունը գրվում է օ տառով, օրինակ՝ օր , օդ, օձ, օրիորդ, օթևան, բացառությամբ՝ **ով , ովքեր** բառերի, իսկ ո տառը ո է գրվում, երբ վօ է լսվում , ինչպես՝ ոգնի , ողկույզ, որսորդ, որոշել, որակ , Ոդիսևս, Որմիզդուխտ, բացառությամբ մի շարք օտար բառեր, որոնց սկզբում գրվում է վո, օրինակ ՝ վոլտ, վոլֆրամ , վոլեյբոլ, վոկալ, Վոլգա:

2/ Բառամիջում օ է գրվում այն դեպքերում , երբ օ-ն արմատի սկզբնատառն է , օրինակ՝ականջօղ, կեսօր, տնօրեն, ամենօրյա, կօգնի և այլն: Մնացած բոլոր դեպքերում բառամիջում և բառավերջում օ լսելիս գրվում է ո տառը, օրինակ ՝ ցորեն, գործարար, մոլորվել, երեկո և այլն:

3/Բաղաձայնից հետո ո տառը արտասանվում է օ, իսկ ձայնավորից հետո արտասանվում է վօ,օրինակ՝

Ձայնավորից հետո ո տառը լսվում է վօ	Բաղաձայնից հետո ո տառը լսվում է օ
Հնաոճ /հնավօճ/, արջաորս/ արջավօրս/	Ութոտնուկ/ ութօտնուկ/, անորակ/ անօրակ/

4/ Կ և չ մասնիկներից հետո ո տառը նույնպես արտասանվում է վօ, քանի որ նրանք հնչվում են կը և չը , այսինքն ՝ ո-ն կրկին ձայնավորից հետո է լինում, օրինակ՝ կողբամ - կվօղբամ, կորդնի-կվօրդնի, չորոշել-չըվօրոշել և այլն:

Հարցեր և առաջադրանքներ

1.Օգտվելով բառարանից ՝ գրի՛ր օ-ով և ո-ով սկսվող 5-ական բառ:

2.Կարդա՛ քո գրած բառերը և ըստ սյունակի առանձնացրու օ լսվող և ո լսվող բառերը:

Օ արտասանվող	Ո արտասանվող

3.Կարդա՛ կանոն 1-ը:

4. Արտագրի՛ր և լրացրո՛ւ օ կամ ո:

-ոբ, -ոագիր, -ջիլ,- զնի, -ոացույց, -ոթ, -ոոր, -թևան, -ղկույզ:

5.Կարդա՛ կանոն 1-ի բացառությունները և գրիր բաց թողնված տառերը՝ -վ, -վքեր:

6. Գրի՛ր այն 5 օտար բառերը, որոնց սկզբում գրվում է վո:

7.Հետևյալ բառերից կազմի՛ր այլ բառեր այնպես, որ դրանք հայտնվեն բառամիջում :

Օդ, օրինակ, օգուտ, օղ, օր:

Օրինակ՝ օղ- ականջօղ:

8. Կարդա՛ կանոն 2-ը և գրի՛ր , թե ինչու ես քո կազմած բառերի բառամիջում գրել օ:

9.Արտագրի՛ր տրված բառերը և ըստ արտասանության առանձնացրու սյունակներում :

Բարձրառձ, տարորոշել, անորակ, բնորոշ, բազմաոստ, արջաորս, հոգեորդի, ութոտնուկ:

Օ արտասանվող	Ո արտասանվող

10.Կարդա՛ կանոն գ-ն և ստուգի՛ր լրացրած աղյուսակդ:

11.Հետևյալ բառերից առաջ գրի՛ր կ և չ մասնիկները:

Որոշեմ, ողբամ, ենթադրեմ, ենթարկվեմ:

Օրինակ՝ որդնի- կորդնի, չորդնի:

12. Կարդա՜ կանոն 4-ը և քո գրած բառերի մոտ նշիր, թե ինչպես ես արտասանում այդ բառերը՝ օ, թե ո:

13. Արտագրի՜ր և լրացրու՜.

ա/ ո կամ վո

-ոբ, երկ-ոյակ, արջա-ոս, հոգե-ոդի, զին-որ, թևա-ր, սև-ոակ, բարձրա-ևտ, -ևեյբոլ:

բ/ օ կամ ո

ամեն-ոյա, աման-ոյա, ան-ոինական, հանր-գուտ, մեղմ-ոոր, մեղմ-ոեն, որ-ոոց, արծաթազ-ծ, հ-գուտ, ազգ-գուտ, տն-ոեն, պարզ-ոոշ, օրըստ-ոե, երեկ-, ախ-ոժակ, շ-ոոր, հպարտ-ոեն:

14. Շարքերից ընտրի՛ր և դեմ դիմաց գրիր հոմանիշ բառերը,

ա/ ոսոխ, որջ, որձ, ողորկ, որթ, որմ

բ/ հարթ, պատ, թշնամի, արու, վազ, բույն:

15. Կազմի՛ր բառակապակցություններ հետևյալ բառերով՝ մեղմօրոր, վաղորդյան, ոսկեզօծ, ողկույզ, քնքշորեն:

16. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում օ:

1/ ազգ-գուտ, տն-ոեն, օր-ոոց

2/ աման-ոյա, երեկ-, մեղմ-ոոր

3/ շաբաթ-ոյակ, բաց-թյա, անհ-տ

4/ արծաթազ-ծ, օրեց-ր

Հասկացման բերող քարտ

Ը-ի ուղղագրության և ուղղախոսության կանոնները

Ը-ն գրվում է հետևյալ դեպքերում՝

1.Բառասկզբում ը գրվում է ղ-ից, մ-ից և ն-ից հետո և ըստ, ընդ բառերում, օրինակ՝ ըղձալի/ ցանկալի/, ըմբիշ, ընկույզ, ընդդեմ:

2. Բառամիջում ը-ն գրվում է այն դեպքերում, երբ ը-ով սկսվող արմատ կա և կ և չ մասնիկներից հետո, օրինակ՝ գործընկեր, նախընտրել, կընկնի, չընդունել, օրըստօրե :

3.Բառամիջում լսվող ը-ն միշտ գրվում է ,օրինակ՝ տասը, դառը, ինը, խառը, քաղաքը, տունը:

Տողադարձի ժամանակ գաղտնավանկի ը-ն գրվում է , օրինակ՝ մտրակ-մըտ-րակ, գրիչ- գը-րիչ:

4. Մնացած բոլոր դեպքերում բառամիջում լսվող ը-ն չի գրվում,օրինակ՝ անխնա, անմնացորդ,կրթություն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բառարանից օգտվելով `գրի՛ր ը-ով սկսվող 10 բառ:

2.Ուշադրությո՛ւն դարձրու , թե քո գրած բառերում ո՞ր բաղաձայններից առաջ է գրված ը տառը : Գրի՛ր այդ բաղաձայնները:

3. Կարդա՛ կանոն 1-ը:

4. Ընկեր, ընթերցել, ընթաց, ընտրել բառերով կամ նրանց արմատներով կազմիր 2-ական բառ:

5. Տրված բառերը դասավորի՛ր՝ ըստ աղյուսակի:

Հյուրընկալ, ընկեր, ինքնըստինքյան, ճեպընթաց, հատընտիր, ըղձալի, ընդդեմ, ազգընտիր, անընդմեջ, ըմպել, ըմպանակ:

Ը-ն բառասկզբում	Ը-ն բառամիջում

6.Կարդա՛ կանոն 2-ը:

7. Առանձնացրո՛ւ առընթեր, կընկնի, չընդունել, օրընդմեջ, անընդմեջ, անընդհատ, ինքնըստինքյան, գործընկեր, գահընկեց, հատընտիր, վերընձյուղվել, խոչընդոտ, դասընկեր, զուգընտիրվայրընթաց:

Օրինակ՝ սրընթաց - սուր+ընթաց

8. Կարդա՛ կանոն 3-ը և տողադարձիր հետևյալ բառերը ՝ անպայման գրելով ը տառը:

Գրպան, գրիչ, գրություն, ձկնորս, ժպտալ, գնալ:

Օրինակ՝ գծել- գը-ծել

9. Արտագրի՛ր, որտեղ անհրաժեշտ է , գրի՛ր ը տառը:

Հյուր-նկալ, անակ-նկալ, ան-նկալելի, ակ-նբախ, ձկ-նկիթ, սր-նթաց, ճեպ-նթաց,ինքն-ստինքյան, կոր-նթարդ, ակ-նդետ, գույզ-գույն, ան-նդմեջ, վայր-նթաց, ակ-նթարթ, ակ-նկոր, ակ-նդետ, խոչ-նդոտ, մթ-նկա, լուս-նկա, չ-նկնել, առ-նթեր:

10. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում ը:

1/ ան-նդմեջ, ակ-նթարթ, չ-նկնել

2/մակ-նթաց, մթ-նշաղ, ազգ-նտիր

3/ծայր-նթաց, -նդամենը, գործ-նկեր

4/հյու-նկալ, շ-տկել, ան-նկալելի

Դասի պլան

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Օ-ո-ի, ը-ի ուղղագրությունը

ԴԱՍԱՐԱՆ_ 5_րդ

ԱՌԱՐԿԱ- Մայրենի

ԴԱՍԻ ՏԻՊԸ -Նոր նյութի մատուցման դաս

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.

Իմանալ՝

Օ_Ո-ի ,ը-ի ուղղագրության և ուղղախոսության կանոնները

Կարողանալ՝ ձևավորել անսխալ գրելու կարողություն

ՄԵԹՈԴՆԵՐ. Տ-աձև աղյուսակ, Հասկացման բերող քարտերի մեթոդիկա

Անհրաժեշտ պարագաներ ՝ գրատախտակ, կավիճ, քարտեր, դասագիրք, տետրեր, գրիչներ

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ._

1.Հասկացման բերող քարտերի մեթոդիկայի կիրառում՝ իր ողջ քայլաշարով:

2. Գործնական վարժությունների կատարում/ Տ -աձև աղյուսակի կազմում/ ;

3.Գնահատում:

4.Տնայինի հանձնարարում:

Ներառարկայական կապ՝ Հայոց լեզու

Միջառարկայական կապ՝ Անգլերեն

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Վ. Բաբայան , <<Աստղեր >>

ԴԱՍԱՐԱՆ._ 6_ՐԴ

ԱՌԱՐԿԱ- Մայրենի

ԴԱՍԻ ՏԻՊԸ -Նոր նյութի մատուցման դաս

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.

Իմանալ՝

Իմանալ՝ .արտահայտիչ կարդալ և արտասանել բանաստղեծությունը

.ընկալել բանաստեղծության կառուցվածքը և տաղաչափական պատկերը

Կարողանալ ՝

.զարգացնել կանխատեսման և երևակայական մտածողության կարողությունները

.մարդկանց, առարկաների, երևույթների բնորոշ հատկանիշները տեսնելու,համեմատելու և համապատասխան խոսք կառուցելու կարողություններ ունենալ

ՄԵԹՈԴՆԵՐ՝ Ռիվինի մեթոդիկա

Անհրաժեշտ պարագաներ ՝ գրատախտակ, կավիճ, քարտեր, դասագիրք, տետրեր, գրիչներ ,նկարներ

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ՝

1. Ռիվինի մեթոդիկայի կիրառումը՝ իր ողջ քայլաշարով
2. Գնահատում
3. Տնայինի հանձնարարում

Ներառարկայական կապ՝ Հայոց լեզու

Միջառարկայական կապ՝ Բնագիտություն: